

ԵՐՈՒՍԱԼԷՄԻ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Թէլ-էլ-Ամարնայի մէջ գտնուած տախտակներուն համաձայն, Ն. Ք. 1400 ին, Երուսաղէմ քաղաքը քանիցս յիշուած է Ուրու-Շալիմ (Urusalim) անունով, որ «Սաղէմի-Քաղաք» կամ «Սաղաղութեան քաղաք» կը նշանակէ:

Երուսաղէմ կամ Սաղէմ Քանանի կառուցող քաղաքներէն մին եղած էր: Հաստատուած է որ Սաղեստանեայց լեզուով «uru» համազօր է «alu»-ի որ «քաղաք» կը նշանակէ:

Եգիպտոսի Ռամսէս Բ. եւ Ռամսէս Գ. (փարաւոններ 19^{րդ} եւ 20^{րդ} հարստութիւններէն) թագաւորներու մեհենական գրութեանց մէջ, Երուսաղէմը կոչուած է պարզապէս Շալամ (Shalam) կամ Սաղէմ (Salem) անուններով:

Թէլ-էլ-Ամարնայի տախտակներէն ումանք նամակներ են, զորս գրած է Էպէտ Թօպ (Ebed Tob) կամ Ապտի Քիպա (Abdi Khiba) Երուսաղէմի թագաւորը առ Փարաւոն, անկէ օգնութիւն ուզելուն համար իր երկրին թշնամիներուն դէմ:

Ան առ Փարաւոն գրած իր նամակներուն մէջ կ'ըսէ թէ, ինքը իրեն Երուսաղէմի թագաւոր Պաղեստինի մէջ, Եգիպտոսի ուրիշ կառավարիչներուն պէս չէ, իր թագը ժառանգաբար ստացած չէ, ո՛չ իր հօրմէն և ոչ ալ իր մօրմէն, ան իրեն տրուած է «Հզօր Թագաւոր»էն: Ուրիշ նամակի մը մէջ ալ, կը խօսի Երուսաղէմ լեռնաքաղաքի մասին, Պիթ-Նինիբ (Bit-Ninip) անունով, իրեն օտարացած: Հաւանաբար, Երուսաղէմի «Բարձրեալ Աստուած»ը նոյնացած ըլլայ Ninipի հետ, որ Բաբելոնի մարդուկ Սրեգ աստուածն էր:

Փիւնիկէն գրուած ուրիշ նամակի մը մէջ կը տեսնուի երկրորդ Պիթ-Նինիբ (Bit-Ninip) մը, հիւսիսային Պաղեստինի մէջ: «Հզօր Թագաւոր»ը տարբեր է Եգիպտոսի «մեծ թագաւոր»էն: Հաստուածի մէջ Էպէտ-Թօպ կը յայտարարէ թէ, ո՛րչափ ալ Փարաւոն օգնութիւն չի զրկեր, բայց «Հզօր Թագաւոր»ին բազուկը պիտի հասնի նահարիմի և Բաբելոնի երկիրները: Կ'երեւի թէ, Էպէտ-Թօպ քահանայ թագաւոր մըն

է, և այս կերպով շատ հետաքրքրական զուգակշիռ մը կ'ըլլայ Մելքիսեղեկի հետ, իրեն «քահանայ Աստուծոյ բարձրելոյ»:

Երուսաղէմի Էպէտ-Թօպ թագաւորին ըսելը թէ՛ ինք իր թագաւորական իշխանութիւնը իր «հօրմէն» կամ «մօրմէն» ատած չէ, երբայցեւոց թուղթին մէջ շատ զարմանալի մեկնութիւն մը ստացած է (Երբ. Է. 3): Եւ որովհետեւ Երուսաղէմ հաւանաբար «Քաղաք Աստուծոյ» կը նշանակէ, կերպով մը խաղաղութեան և ապահովութեան Աստուծոյ (նկատի ունենալ արարելէն սկիզբ առնելու «խաղաղութիւն» և երբայցեւոց շալամ բառերը) եղած էր. բաբելոնիներէն մէջ սաղիմ (salim) կը նշանակէ «քաղաք զաւանջ կամ ուխտի», որով Մելքիսեղեկի Արքահամին ընդառաջ երթալը և ողջունելը զիրար կրնայ մեկնուիլ: Էօլիւր, ալլա, տասնորդ տալը, քահանայից կամ թագաւորաց ռաբրիական վաղեմի սովորութիւն մըն էր, իսկ Մելքիսեղեկի զործածած բանաձեւը Արքահամ նահապետը օրհնելու ատեն, Եգիպտոսի մէջ գտնուած արամեերէն արձանագրութեանց մէջ կը տեսնուի:

Հին Երուսաղէմ քաղաքը կը գտնուէր, հիւսիսային լայնութեան 31° 47' և արեւելեան երկայնութեան 35° 15' աստիճաններուն միջև: Ազրիանոս կայսրը երբ ի նորոյ Երուսաղէմը վերանորոգեց, Էլիա Գարիթօլինա (Aelia Capitolina) անունով վերանուեց զայն, 130 թուականին (Յ. Ք.):

Անոր ունեցած միջին բարձրութիւնը 2500 ոտքի կը հասնի Միջերկրական ծովէն և 3800 ոտք Մեռեալ ծովուն մակարդակէն: Քաղաքը հաստատուած էր ժայռոտ բարձրաւանդակի մը վրան: Արեւելեան կողմէն Կեդրոնի ձորը զայն կը բաժնէր Համբարձման կամ Զիթենեաց լեռնէն, որ Երուսաղէմէն 100-200 ոտք բարձրութիւն մ'ունի: Իսկ Ուատի-էլ-Ռապպային Երուսաղէմը կը բաժնէր արեւմուտքէն և հարաւէն, որ կը միանար Կեդրոնի ձորին, Սեղովամի ազրիւրին մօտ:

Պէտք է գիտել տանք որ, Երուսաղէմի նախկին պատմութիւնը շատ մթին և այլաբանական է: Եբրայեցեւոց Ս. Երկիր գալէն շատ առաջ, Եգիպտացիք արդէն Երուսաղէմ քաղաքը գրաւած էին: Երուսաղէմ եղած էր Յեբրեացեւոց քաղաք և կոչուած էր Յեբրու (Ծննդ. ԺԴ. 18, Յեսու ԺԸ. 18, Ա. Մնաց. ԺԸ. 28):

Մահմետականք Երուսաղէմը Սուրբ Քաղաք կը յորջորջեն Պէյր-էլ-Մուկասսէս, կամ Գոլսու (սուրբ) անունով:

* * *

Երկար ժամանակէ ի վեր, հին Երուսաղէմի տեղագրութիւնը, ի մասնաւորի Անգլիոյ և եւրոպական ուրիշ երկիրներու մէջ, խանդավառ ուսումնասիրութեանց և վիճաբանութեանց առարկայ եղաւ: Ֆրանսայի մէջ ևս, այսպիսի ուսումնասիրութիւններ եւ վիճաբանութիւններ պակաս չեղան, ա՛յնքան խանդավառութեամբ որքան Անգլիոյ մէջ: Անգլիացիք իրաւամբ Երուսաղէմի տեղագրութիւնը պանծալի, գեղեցիկ տեղագրութիւն կը կոչեն: Այսուամենայնիւ, ինչպէ՞ս կարելի է ստորագնահատել այն մեծ հետաքրքրութիւնը բոլոր այս հարցերուն որոնք Ս. Գիրքը կը հետադոտեն, մեզի այնքան մօտիկ:

Մէկ կողմէն՝ նւթին ունեցած դժուարութիւնը, մեզի խորունկէն քննելու անհրաժեշտութիւնը ցոյց կուտան, այն բոլոր խնդիրներուն, որոնք այս կամ այն տուեալներով մեզի կը ներկայանան, միւս կողմէն՝ Ս. Քաղաքին դարերու ընթացքին կրած ալլազան փոփոխութիւնները, տեղերու եւ դիրքերու նկատմամբ, մեզի ահաւոր դժուարութիւններու առջև կը դնեն: Ստոյգ է որ Ս. Քաղաքը դարերու ընթացքին, շատ փոփոխութիւններու ենթարկուած է: Ան երբեմն ընդարձակուած և երբեմն պղտկցած է: Սակայն, ամէն բանէ առաջ, պէտք է գիտնալ իր ծագումը, մնացեալը անկէ կախում ունի: Սիւնը դարերու ընթացքին եղած էր ամուր միջնաբերդ մը, այլևայլ տէրութիւններ զայն պաշարած, գրաւած և տիրացած են անոր: Սիւնը առաւելաբար միջնաբերդ մը ըլլալով, Ս. Քաղաքին պաշտպանութեան խարխիւսը եղած էր: Ով որ Սիւնին տիրած էր, տիրացած էր Ս. Քաղաքին:

Կարեւոր և հետաքրքրական հարցում մը: Սիւնը ո՞ր կը գտնուէր: Յաջորդ երեսներով պիտի ջանանք այս խիստ դժուար խնդիրը լուծել: Ինչ որ ըսուած է, զանց չպիտի առնենք ըսել, թէ և կը խորշինք, խորհնելով որ այս շատ շփոթ և խառնակ խնդիրը, թերեւ շփոթութեան պիտի մասնէ ընթերցողը, ինչ որ ալ ըլլայ, նկատի պիտի

առնենք բոլոր այն վայրերը որոնք երկրախոյզերու կողմէն մեզի հաւաստուած են, ի մասնաւորի Յովսեփոսի պատմութեան և Աստուածաշունչի մէջ:

Հետեւեալ հիմնական եզրակացութիւնը շատ որոշ պէտք է ըլլայ: Նախապէս Յերուսաղէմը Սիւն անունը միջնաբերդին համար տրուած անունն էր, որ Ս. Քաղաքին արեւելեան բլուրին հարաւային կողմը կ'իյնար: Սակայն այս անունը, տակաւ առ տակաւ, Տաճարին բլուրին համար, ապա՝ ընդհանրապէս Սուրբ Երուսաղէմին և իր բնակիչներուն համար զործածուեցաւ: Քրիստոնէութեան առաջին չրջանին մէջն էր որ Սիւն անունը կիրարկուեցաւ ի մասնաւորի հարաւ արեւմտեան բարձր բլուրին համար միայն:

Հոս, բուն խնդիրը Ս. Քաղաքին ընդհանուր տեղագրութեան մասին է անշուշտ: Տնօրինական Սրբազան Տեղերը, Վերնատունը և Ս. Յարութեան Տաճարը, մասամբ մը միայն, հոս նկատի չեն առնուած:

Մեր կատարելիք տեղագրական այս քննութիւնը ամբողջովին մէկզի կը ձգէ Վերնատան հարցը, և ասով մեզի հաստատուն կուտան մը կ'ընծայէ պաշտպանելու համար արդէն ծանօթ եղող Ս. Յարութեան (Քրիստոսի Ս. Գերեզմանին և Գողգոթային) վաւերականութեան հարցը: Ապահով գետնի մը վրայ գտնուելու համար, ծանօթէն անծանօթին պէտք է երթանք, իրբեմէն ակնակէտ արդի Ս. Քաղաքին հողը նկատի առնելով: Մեր տեղագրական այս քննութեանը մէջ մեզի պիտի օգնէ Յովսեփոսի նկարագրութիւնը, ինչպէս նաև Ս. Գրական բնագիրներուն անվիճելի համամտութիւնը և հեղինակութիւնը:

1. — ԵՐՈՒՍԱԼԱՅԻ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Անկարելի է բացատրել Երուսաղէմի պատմական ալլազան փոփոխութիւնները, եթէ երբեք յստակ գաղափար մը չունենանք իր կազմուածքին, ըսել կ'ուզենք բլուրներու և ձորերու մասին որոնց վրայ շինուած էր ան:

Այս ժառոտ խաւերու ընդհանուր գիծերը և կտրուածքները գեռ կը տեսնուին հողին պարզ քննութեամբ: Վերջին ժամանակներու մէջ, երկրախոյզներու կողմէ կատարուած աշխատանքները, մակարդակին կոր գիծերը, հողին կտրուածները

քննելու առթիւ, մեզի թոյլ կուտան ճշգրիտ և բացայայտ գաղափար մը կազմելու հին երուսաղէմ քաղաքի մասին: Քաղաքը երկու բլուրներու վրայ կառուցուած էր: Այս իրականութիւնը մեզի համար համոզիչ կը դառնայ, եթէ երեւակայութեամբ քաղաքը դիտենք Դամասկոսի դրան կատարէն և կամ Սիոն քոյրերու վանքի տանիքէն Սալի Ճանապարհին (Via Dolorosa) վրայ:

Հիւսիսէն դէպի հարաւ, ընդարձակ, խորունկ ձոած ձոր մը կը տեսնուի, ուր տուները ի մասնաւորի արեւելեան կողմին վրայ դէպի զառիվայրը կը հակին: Այս ընդհանուր համայնապատկերի մասին է անշուշտ երբ Տակիտոս տեղեկութիւն կուտայ և կ'ըսէ «Երկու ընդարձակ բլուրները քաղաքին գուրս ցցուած մասերը կը շրջապատէին» (Պատմ. 5. 11):

Թերևս Տակիտոս պատմիչ, հրեայ պատմաբանը կ'ընդօրինակէ, վասնզի՝ երկուքին բացատրութիւնները նոյնանման են արդարև. «Քաղաքը կառուցուած էր երկու բլուրներու վրայ» (Յովսեփոս, Հրէից պատերազմներ, Ե. Դ. 1): Վերև յիշատակուած վիճակութեանց վրայ հիմնուելով, ջանանք երկու մեծ բլուրներուն զիրքը ճշգրիտ: Այս բլուրներէն մին դէպի արեւելք, իսկ միւսը դէպի արեւմուտք կը գտնուէին: Այս երկու բլուրները իրենց ստորաբաժանումներն ալ ունէին: Այս երկու բլուրները կեդրոնական ձոր մը կը կազմեն, որ այժմ Դամասկոսի գոռէն դէպի Սելովամ կ'երկնայ, որ միւս ձորերէն աւելի զգալի տափարակութիւն մը կը կազմէ: Այնպէս որ, թէ՛ արեւելեան և թէ՛ արեւմտեան բլուրներուն մէջ, որոշ ստորաբաժանումներ կը տեսնուին, որոնք խոտորնակ ձորերը կը ձևացնեն: Այս իրականութիւնը աւելի դիւրութեամբ արեւմտեան բլուրին վրայ կը տեսնուի:

Այս վերջինը երկու մասերու կը բաժնուէր, որոնցմէ մին փոքր խորութիւն եւ փոքր լայնութիւն ունեցող բլուր մը կը կազմէր, որ այժմեան միջնաբերդէն (Դաթի բերդ) կ'երկնար, որուն հիւսիսը Ս. Յարութեան Տաճարը, իսկ հարաւը Հայոց թաղը և Վերնատունը կը գտնուին:

Հարաւէն եռանկիւն մը, զրեթէ քառակուսի մը կը կազմէր, սակայն աւելի հիւսիս-արեւելք ցցուածք մը կը ձևանար, իսկ հիւսիսակողմը կեդրոնական ձորին կոր

ըլլալուն պատճառաւ շեղանկիւն մը կը ձևացնէր, որ երկու կողմերէն ձորերով, իսկ միւս երկու կողմերէն ալ քաղաքի արդի պարիսպներովը կը վերջանային: Արեւելեան բլուրը հարաւէն եռանկիւն մը կը կազմէր, որուն մէկ ծայրը Սելովամի աղբուրին վրայ կը գտնուէր, իսկ միւս ծայրը այժմեան Տաճարին գլխացի խաւիսը կը կազմէր:

Անկէ ժայռերը մասնաւոր կերպով մը հիւսիս-արեւմտեան և արեւելքէն կեդրոնական ձորը կ'երկնան, մինչև հիւսիսակողմեան շրջապատին վերջը, իսկ ուրիշ թիւթե ժայռերու կտրուածքներ, որոնք արեւմուտքէն արեւելք կ'երկնան, կեդրոնի ձորը միանալէն առաջ, հիւսիսը գտնուող բլուրով մը Սուրբ Աննայի վանքին և Բեթհեզայի աւազանին կը միանան:

Ասկէց մօտաւորապէս 150 մետր աւելի հեռուն, դէպի հիւսիս կտրուածք մը կայ որ արուեստականօրէն մեծցած էր, բայց զոյութիւն ունեցած էր խուզարկութիւններէն առաջ: Այս կէտին շուրջն էր որ, Տաճարին թերուղի ժայռոտ զանգուածը կը գտնուի որուն կից է Սիոն քոյրերու զոյգ աւազանը: Նոյնիսկ իրենց եկեղեցիին մէջէն Պէզէթա (Bezetha) կոչուած չորրորդ ժայռը և բլուրը կը սկսի: Պէտք է զիտել որ, հիւսիսի երկու բլուրները, այսինքն՝ Ս. Յարութեան և Պէզէթայինը, ուր այժմ Տէրվիչներու մզկիթը կը գտնուի, արդի քաղաքին մէջէն, առանձնաբար կը շարունակուին:

Եթէ այժմ ուզենք բազդատել մին միւսին հետ իրենց ամբողջութեանը մէջ, այսինքն՝ արեւելեան բլուրը արեւմտեան բլուրին հետ, պիտի տեսնենք որ արեւմտեան բլուրը իր ամբողջութեանը մէջ արեւելեանին վրայ կը տիրապետէ, մասնաւոր եթէ համեմատենք զայն հարաւային կողմի երկու մասերուն հետ, որուն մէջ հին քաղաքը կը գտնուէր:

Բլուրներէն և ոչ մին ամբողջովին ուղիղ էր, սակայն արեւմտեան կողմինը, մասնաւոր իր հարաւային ծայրամասին մէջ որ դէպի հարաւ և արեւմուտք կ'երկնար, երկու ուղիղ ձորերովը իր առանցքին վրայ ուղիղ էր, մինչդեռ արեւելեան բլուրը, հետեւելով կեդրոնական ձորի դիրքին, արեւելեան կողմէն միջին բլուրին հետեւելով զրեթէ զուգահեռական ձորեր կը ձևացնէր և ասով

մահկաձև կերպարանք մը կը ստանար:

Ջուերերու ընթացքը, որ այնքան կարեւոր է երուսաղէմի պէս քաղաքի մը պատմութեան համար, բնականաբար բլուրներու զիրքէն կախում ունի: Արդէն ըսինք թէ, երկու տափարակութիւնները որոնք Պէդէթմա բլուրը կը շրջապատէին, շատ քիչ քանակութեամբ միայն ջուր կը հայթայթէին, որոնք Սիոնի քոյրերու վանքին և Սուրբ Աննայի աւագաններուն մէջ հաւաքուելով կ'օգտագործուէին: Մինչև ցարդ, կը կարծուի թէ ջուրերը կուգային այն աղբիւրներէն որոնք քաղաքին հիւսիսը կը գտնուէին, ուր ժամանակ առ ժամանակ փնտռութիւններ կը կատարուին:

Արեւմուտքէն դէպի արեւելք գտնուող ձորը, արեւմտեան կողմի բլուրը երկու մասերու կը բաժնէր: Պիրքէթ-Մամիլլայի մեծ աւազանին ջուրերը նախ Համամ-էլ-Բաթ-րաք և ապա Տաճար տանելու համար: Բայց Պիրքէթ-Մամիլլան անձրեւի ջուրերու ջրամբար մըն էր: Քաղաքին գլխաւոր աղբիւրը որ մինչև ցայսօր գոյութիւն ունի, արեւելեան կողմը կը գտնուի: Ա. Կոյսին աղբիւրն է ան, զոր խաւմները Ում-Տաւան կը կոչեն (աստիճաններու մայր, քարէ աստիճաններուն պատճառաւ) որ ժայռին մէջ փորուած ջրմուղով մը Սելովամի աւազանին կը միանար: Աւելի վար, ձորին մէջ Պիր Էյուպ (Յորի աղբիւր) աղբիւրը կը գտնուէր, աղբիւր մը, որ անձրեւային եղանակին մէջ առատ ջուր կը հայթայթէր, որ մինչև անգամ փոքր առուակ մը կը ձևացնէր, սակայն այս հորը քաղաքին մէջ էր գտնուեր:

Սակայն բոլոր այս աղբիւրները անբաւական ըլլալով, Էնթէզէմէն հեռու գտնուող ջուրերը ջրմուղով բերին: Այս ջրմուղը դեռ կը տեսնուի արեւմտեան բլուրին զատիվայրին վրայ որ կ'երթայ մինչև Տաճարին շրջապատը, որ արեւմուտքէն եկող ուրիշ ջրմուղի մը հետ կը միանար:

Եթէ ջրաբաշխական այս իրողութիւնները ընդունինք, զիւրութեամբ պիտի կրնանք նշանակուած ջուրի մակարդակային ճամբաները հասկնալ եւ Յովսէփոսի տուած նկարագրութիւնը կատարելապէս յստակ պիտի ըլլայ մեզի համար:

Այս նկարագրութիւնը կուտանք չափերով մէջ, յետոյ իւրաքանչիւրին մասին պիտի տանք համառօտ մեկնութիւն մը:

(Շար.)

ՊԱՐԳԵՒՆՆ ԿԱՐԴԱՊԵՏ

ԳԵՐԵՆՐՈՒ ԱՌԹՈՒՄ

"FROEBEL"

Շնորհակալութեամբ ստացած ենք Պ. Գէորգեանի (Կիպրոս) Froebel devant la pedagogie scientifique մանկավարժական գործը՝ ֆրանսերէնով: Ինչպէս կ'երևի յառաջարանի տեղ եղած ազգարարութիւնէն, գրքոյը կազմուած է մեծաւ մասամբ Ֆրէտայէի L'Education de l'homme գործէն:

Անշուշտ սիրելի պիտի ըլլար եթէ Պ. Գէորգեանը հայերէնով պատրաստէր իր աշխատանքը, սակայն ֆրանսերէնի մէջն ալ՝ այնքան պարզուած եւ թելադրիչ է որ չենք կրնար զնահատանքով չմտածել իր մասին, երբ կը կարդանք գրքոյը: Պ. Գէորգեան զովելի խնամքով Ֆրէտայէի քիչ մը բարդ ու մանուածապատ գործէն ելուզած եւ հասկնալի սիստեմի մը մէջ դասաւորած է կարգ մը մանկավարժական զիտելիքներ, որոնք իրենց այս նոր մէկտեղումով եւ հասկնալիութեամբ, աւելի քան օգտակար եւ կրթիչ են, յանձնարարելի բոլոր անոնց, որոնք մանուկներու դաստիարակութեան սրբազան աշխատանքին են լծուած:

"ԱՍՏՂԵՐՈՒՆ ՏԱԿ"

Հանդիմանալով ընդունած ենք նոյնպէս Պ. Գէորգ Զէքիմեանի «Աստղերուն Տակ» բանաստեղծական ստուար հատորը, շուրջ 300 էջերէ բաղկացած: Յարմար տեսնին պիտի անոնց, որոնք պիտի սիրէին զգացակից ըլլալ բանաստեղծին կեանքի տխուր ու քաղցր հոգեպահերուն: Հատորը կազմող քերթուածները գրուած են մեծաւ մասամբ գոհացնելու իր չգոհացուող իղծերը, անաւարտ երազները եւ խորտակուած յոյսերը: Շահեկան է արուեստի սպասաւորին բով, հոն, հաստատել նաեւ յետպատերազմեան մեր երիտասարդութեան հոգեկան կարգ մը երեսները, որոնք այլապէս շահեկան կը դառնան բանաստեղծական այս հատորին մէջ: Այժմ կը բաւականանանք շնորհաւորել միայն հեղինակը, իր գրքի մասին վերապահելով մեր դատաստանը մօտաւոր եւ յարմար առիթին: